Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-646[1]-21.10.2014,27.11.2014-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետև՝ օրենք) 23-րդ հոդվածի 6-րդ մասում «տեղեկատվություն» բառից հետո լրացնել «(նաև էլեկտրոնային տարբերակով)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետում «եռամյա» բառը փոխարինել «քառամյա» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ	ՀՈԴՎԱԾԸ, ԿԵՏԸ, ԵՆԹԱԿԵՏԸ /ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ/	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ				
1	ՀՀ կառավարություն	Հոդված 1	«այդ թվում՝ Բյուջետային գրասենյակի միջոցով ներկայացված» բառերը փոխարինել «այդ թվում՝ Բյուջետային գրասենյակի առաջարկությամբ հանձնաժողովի կամ պատգամավորի կողմից ներկայացված» բառերով	Առաջարկվում է Բյուջետային գրասենյակի օժանդակությամբ ձևակերպված պատգամավորական հարցումներն Ազգային ժողովից դուրս ուղարկել հարցման հեղինակի միջոցով: **Առաջարկությունն ընդունված է.** Նախագծի հոդված 1-ը և հոդված 2-ում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ կետի 8-րդ ենթակետը վերախմբագրվել են:
2	ՀՀ կառավարություն	Հոդված 2	նոր խմբագրությամբ շարադրված գործող օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի երկրորդ	**Առաջարկությունն ընդունված է.**

			նախադասությունը հանել	Հանվել են «և պետական բյուջեի պարտքերը» բառերը, ենթակետը վերախմբագրվել է:
3	ՀՀ կառավարություն	Հոդված 2	նոր խմբագրությամբ շարադրված գործող օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի երկրորդ պարբերությունը հանել	Առաջարկվում է Բյուջետային գրասենյակի հարցումներն Ազգային ժողովից դուրս իրականացնել Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի միջոցով: **Առաջարկությունն ընդունված է.** Ենթակետը վերախմբագրվել է:
4	ՀՀ կառավարություն	N1 հավելվածի 13-րդ կետ	«7-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով և» բառերը հանել:	**Առաջարկությունն ընդունված է** (Տես սույն ամփոփաթերթիկի N 1 կետ:)
5	ՀՀ կառավարություն	N1 հավելվածի 18-րդ կետ	Հանել	**Առաջարկությունն ընդունված է** (Տես սույն ամփոփաթերթիկի N 2 կետ:)
6	ՀՀ կառավարություն	N1 հավելվածի 37-րդ կետ	Հանել	**Առաջարկությունն ընդունված է** (Տես սույն ամփոփաթերթիկի N 1 և N 3 կետերը:): Կետը վերախմբագրվել է:
7	Հեղինակներ	N2 հավելվածի՝ 1-ին կետ	«որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով՝ մինչև տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը» բառերը փոխարինել «5 տարի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով» բառերով	**Առաջարկությունն ընդունված է:**